Նակի տպրանք և զնված տվյալ արժեքով ու գնովի Փողի չափը:  
Մնացորդ գումարի վճարման վորոշումը.

բ) Խաղ լուցկիներով—վորոշ քանակի լուցկիներ դարսել  
զանազան ձևերով:

գ) Խաղալ խաչ, մոդական քառակուսիների խաղ և այլն:

2) Յերեխաների աշխատանքն աշխատանքային սենյակում  
և դպրոցամերձ հողամասերում:

ա) այս կամ այն իրը պատրաստելու անհրաժեշտ նյութի,  
նրա արժեքի, ժամանակի, զործագրած ժամանակի հաշվեառումը.  
որինակ ինչ յերկարություն պետք է ունենա տախտակը, զոր-  
պեսզի կարելի լինի շնորհ արկը, յեթե տրված են բարկումների  
յերկարությունը. քանի տարբեր տեսակ սերմեր են հարկադիր  
ցանելու համար բանջարանցում, յեթե տրված ե բանջարանցի  
ընդհանուր տարածությունը և ցանի նորման:

3) Հաշվեառում և հաշվի, կապված մանկական աղատ ժա-  
մերի կազմակերպման ու կուլտուրական որդագործման հետ.  
որինակ, ինչ գումար պետք է դանձնել ստամալու խմբակի հա-  
մար պահանջվելիք լրազրերի քանակը. քանի գիրք պետք ե  
ձեռք բերել դպրոցական գրադարանը ճուղացնելու համար, յեթե  
տրված ե մի աշակերտի համար պահանջվելիք գրքերի միջին քա-  
նակը. վերքան ժամանակ են գործադրել յերեխաները—մի կամ  
մի քանի հոգի—մանկական հրապարակը կահավորելու համար.  
քանի յերեխա յե պահանջվում մաքրելու համար վորոշ տարա-  
ծություն. արժեքի ու անհրաժեշտ նյութերի հաշվեառումը պատ-  
րաստելու համար չմոշի, սահմաներ, քոշեր և այլն:

4) Կազմել և վճռել սկստրաստի խնդիրներ յերեխայի անձ-  
նական առողջապահության, հասարակական առողջապահության  
ու սանիտարիայի հոգատարության բնագավառից. մաքրության  
պահպանության վրա արած ծախքերի թերությունները (սապոն,  
խողանակ և այլն). վորքան ժամանակ և տնտեսում հասարակա-  
կան լվացարանը. վորքան ջուր են գործադրվում կուլտուր և  
կուլտուրապես ցածր բնատանիքները մաքրասիրության համար  
(համեմատություն): Մի հարուն հատկացրած տարածության (հա-  
տակ, լույս) նորման. համեմատել նորման իրական դրության  
հետ զանազան տներում: Կատարել տնային գեղատան վրա արած  
ծախքերի հաշիվը, որին ընթացքում ժամանակը լավագույն և  
նպատակահարմարություն դասավորելու և գործադրելու հաշիվը (որ-  
վարեժմիք): Ի՞նչպես են դասավորում իրենց ժամանակը զանա-  
զան պրոֆեսուայի աշխատակիցները:

5. Կազմել և վճռել խնդիրներ համաձայն մարդկանց աշխա-  
տանքի և բնության սեղոնային յերեվությունների վրա կատարված  
դիտողությունների տվյալների՝ յերմաստիճանի (Տեմպերատուր) չա-  
փումը, ձյունի ծածկոցի խորությունը, սառնամանիքային, պարզ,  
անձրեվային որերի հաշվեառումը. չափել բույսերի աճը կապված

արբեր պայմանների հետ (լույս, ջերմություն, խոնավություն,  
ջերմաստիճան): Յերեխներ ու գիշերվա յերկարությունը հաշվել:

6. Խնդիրներ և հաշիվներ կապվակցված կողեկտիվ տնտեսու-  
թյունների տնտեսության հետ, անասսապահություն և թունա-  
բուծությունն հավերի ձու ածելու հաշվեառումը, ընտանի կենդա-  
նիների ու թուների լրիվության հաշվեառումը (թվերով).  
չափի կարիքը (որական և ամսական), հաշիվներ, կապված բան-  
ջարանցի հետ, սերմի կարիքի հաշվեառումը, բերքի հաշվեառումը,  
աշխատանքային բնվենտարի ցուցակգրումը (քանակը, գինը,  
արժեքը), Սերմերի բեղունության վորոշումը (100 սերմից քա-  
նիման և բիզուն): Բանջարանոցների, այգիների, դաշտերի վնա-  
սառուների պատճառած վնասների հաշվեառը Արտից, հեկտարից  
ստացած բերքի հաշվեառումը:

7. Խնդիրներ կոլտնտեսությունների ու գործարանների աշ-  
խատանքների կազմակերպման շուրջը: Վորքան ժամանակ և պա-  
հանջվում կատարելու համար կուտանսությանների տարբեր տե-  
սակ աշխատանքները. համեմատել ձեռքի և մեքենայի աշխատանք-  
ներն իրար հետ, համեմատություն կոլեկտիվ և անհատական  
աշխատանքների: Կարեւոր մեքենանների նորմանների մշակումը  
(տրակտոր, հնձող, կալսող մեքենաններ և այլն): Նույնը Փարբի-  
կայի ու զավոդի աշխատանքների նկատմամբ: Ճիշտ հետեւու-  
թյուններ և ընդանրացումներ աշխատանքի արտադրողականու-  
թյան կախման մասին՝ նրա կազմակերպման յեղանակից, մե-  
քենանների գործարկումից, աշխատանքային վիսցիպլինայից, աշ-  
խատանքի կազմակերպման նոր, սոցիալիստական մթողների  
կիրառումից, սոց-մրցումից և հարցածայնությունից:

8. Հաշիվներ և խնդիրներ նոր կենցաղի, առողջ, զգոն, ան-  
կրոն, կուլտուր-կենցաղի համար մզած պայքարի շուրջը: Հաշիվ-  
ներ, վորոնք բնութագծում են տղիտության, կրոնի վնասը, կեղ-  
տը, հակառողջապահությունը և այլն:

9. Կողմանորոշումն ժամանակի ու տարածության մեջ. կարե-  
գորագույն կետերի մեջև յեղած հնաավորությունները. վորքան  
ժամանակի և հարկավոր անցնելու համար տարածությունը զանտ-  
գան յեղանակներով—գոտով, ձիով, զնացրով:

Առաջին ունակություններ քարտեզի, մասշտաբի աշխա-  
տանքի մեջ:

10. Հասարակ աշխատանքներ գասավորելու համար առար-  
կանները տարածության մեջ և մակերեւույթի վրա. վճռել խնդիր-  
ներ հետեւյալ տեսակի՝ «հասարակության չափ լավ տեղավորել  
կամ-կարասիքը դասարանում, սեղանատանը, առարկանները ման-  
կական անկյունում», «լավ դասավորել նկարները, պատկերները  
պատերի վրա», «լավ ցուցադրել պլակատը կամ խմբակային պա-  
տի լույսը»:

**11.** Հաշվեառումների, հաշիվների հետևանքները ձեվակերպել ամենապարզ գծագրական ձեվերով սյունակերպ դիագրամների նման և ոգտագործել այն դպրոցում, տանը, կարմիր անկյունում։ Ամենապարզ մասշտաբ՝ 1 ցանցը վորոտես միավոր։

### Յ.ՊԴ ԽՄԲԱԿ.

#### Առաջին քառորդ (50 ժամ)։

Ամբողջ թվեր, բանավոր հաշիվ 100-ի և 1000-ի սահմանում՝ (1000 ի սահմանում միայն հեշտ գեպերը, որինակ  $200+300$ ,  $500+300$ ,  $400 \times 2$ ,  $800:4$ ,  $420+200$ ,  $620+100$ ,  $350 \times 2$ ,  $640:2$ , և այլն։

Կրկնել գրավոր գումարման և հանման բոլոր գեպերը 1000-ի սահմանում։

Կրկնել 1000-ի սահմանում բազմապատկման և բաժանման հեշտ գեպերը, վոր յուրացըրել են 2-րդ տարում։ Ավելի բարդ գեպեր բազմապատկման և բաժանման դրույղության մեջ. յերկանից թվի բազմապատկումը յերկանիցի վրա, յեռանից թվի բաժանումը յերկանից և յեռանից թվի վրա։ Վերաստուգումն բազմապատկության՝ բաժանման միջոցով և բաժանման՝ բազմապատկման միջոցով։

Թվի բանավոր և գրավոր համարակարգությունը մինչեւ 1.000.000. բաժանել դասակարգերի և կարգերի, կարողանալ թիվը կարգալ, գրել թելաղությամբ, հաշվել համարակալի վրա։

Ընդլայնել և համակարգել (приведение в систему) չափերի մասին ունեցած գիտությունը, յերկարության չափեր, կիլոմետր, մետր, գեցիմետր, սանտիմետր, միլիմետր, ծանրության չափեր. տոնն, ցենտներ, կիլոգրամ, գրամ։ Տարածության չափեր—արև և հեկտար։

Այս չափերի հարաբերությունները, Նրանց մանրացումը և փոխարկումը, Կարողանալ գործադրել այս չափերը չափելու և կշռելու ժամանակ։

Հասարակ կոսորակներ.—Կրկնություն հասարակ կոտորակների, վոր յուրացըրել են 2-րդ խմակում. ( $1/3$ ,  $1/4$ ,  $1/8$ ,  $1/3$ ,  $1/6$ ,  $1/10$ )։ Նրանց վերակազմությունը: Մի հայտարար ունեցող կոտորակների գումարումը և հանումը: Գտնել թվի մեկ և մի քանի մասերը։

Յերկրաչափական նյութը.—Ուղղող գծի չափելը հողի վրա, հեկտարի և արի չափումը։ Կառուցել քառակուսի և յեռանկյունի եկեղեցի, թողի կամ դաշտային կարգինի ոգնությամբ։ Ցանցավոր թղթի վրա կարողանալ գծել փոքր ուղղանկյունու պլանը, հողի պլանը մասշտաբով։ Ուղղանկյուն դիագրամների գծագրումն ըստ մասշտաբի։

#### Յերկրորդ քառորդ (50 ժամ)։

Ամբողջ թվեր.—Բանավոր գումարման և հանման ձեվերի տարրականացումը 1000-ի սահմանում։ Գումարում յեվ հանում միլլիոնի սահմանում (գրավոր, բոլոր գեպերը)։

Թվերի անունները գումարման և հանման ժամանակ։ Գումարումն ստուգել գումարելիները տեղափոխելով և հանման միջոցով։ Հանունն ստուգել գումարման միջոցով։ Լուծումներ Այսպիսի որինակների լուծումն.  $25-x=42$ ,  $x-25=40$ ,  $60-x=16$ ։

Գործողություններ փակագծերով։ Մեծ թվերը հաշվել համակալի վրա։

Տասնորդական կոտորակներ։—Գաղափար տասնորդական կոտորակների մասին։ Կարգալ և գրել տասնորդական կոտորակները։ Զեկափոխել տասնորդական կոտորակները (որինակ  $0,2-0,20$ )։ Տասնորդական կոտորակների մեծության համեմատությունը։

Երանց առընչությունը մետրական չափերի հետ։ Բարդանվական թվի գրանցումը, արտահայտված մետրական չափերով, գորգես տասնորդական կոտորակ (17 մ., 5 սմ., 5,2 մ) և ընդհակառակը։

Յերկրաչափական նյութը։—Ուղղանկյուն և քառակուսի ձեռնեցող հողամասերի չափումը։ Վորեվի ուղղանկյունու և քառակուսու մակերեւութիւնի վորոշումը։ Տվյալ մասշտաբի վերաբերող պլանով հաշվել ուղղանկյուն հողամասերի փաստական չափերը։

Կարողանալ ըմբռնել դիագրամներն ըստ մասշտաբի և պայմանական նշնաների։ Կարողանալ ոգտագործել սխեմատիկ գծագրումները կապված աշխատանքի հետ աշխատանքային սենյակում։ Կարողանալ կաղապար պատրաստել թղթից, սովորաթղթով թից (կարտոն), թիթեղից, ոգտագործելով քանոնը, սանտիմետրը, անկյունաչափը։

#### Յերերրորդ քառորդ (55 ժամ)։

Ամբողջ թվեր։—Թվերի բանավոր բազմապատկումն 2-ով, 10-ով, 5-ով, 1000-ի սահմանում։

Բազմանիշ թվերի բազմապատկումը և բաժանումը (վերացական և բարդ անվանական թվերի—միլլիոնի սահմանում, գրավոր)։ Բազմանիշ թվերի բազմապատկումը միանիշով, 10-ի վորագոր։ Բարենիշ կամ դաշտային կարգինի ոգնությամբ։ Ցանցավոր թղթի վրա կարողանալ գծել փոքր ուղղանկյունու պլանը, հողի պլանը մասշտաբով։

Բազմանիշ թվերի բաժանումը միանիշի վրա,  $-10$ -ի վորեն աստիճանի վրա,  $-$ լոր տասնյակների։ Թվերի անունները բազմապատկումն և բաժանումը բաժանումը բաժանումը բազմապատկումը։

Հուծել արտպիսի որինակներ.  $x \times 7 = 105$ ,  $70:x=39$ ,  $x:15=4$ :  
Գործողություններ փակագծերով:

Տասնորդական կոտորակներ:—Տասնորդական կոտորակների  
գումարումը և հանում:

Տոկոսներ.—Տոկոսը վորպես մի հարյուրերորդական մաս: Տո-  
կոսի նշան (%): Տերքու գործողության միջոցով գտնել տվյալ  
թվի մի կամ մի քանի տոկոսը: Որինակ, գտնել  $500$  ի  $5\%$ -ը:  
Լուծում.  $400:100=4$  (մի %),  $4 \times 5=20$  (5 տոկոսը):

Մանոթություն տոկոսների հետ անկյունաչափի միջոցով:  
Գծազրի շրջանաձև դիագրամներ տոկոսացույց անկյունաչափի  
ոգությամբ:

Յերկրաչափական նյութ:—Յեռանկյունի. յեռանկյան զանա-  
զան տեսակները. ըստ անկյունի—ուղղանկյուն, շեղանկյուն, ըստ  
կողմերի—հավասարակողմ, անհավասարակողմ, հավասարաս-  
րունք: Գծել քանոնի, անկյունագծի, կարգինի ողնությամբ և  
կազմակարել:

Յեռանկյունու հիմքը, բարձրությունը, զագաթը: Յեռան-  
կյունու կողմերի հատկությունները, վոր ստանում և քառակու-  
սուց և ուղղանկյունուց:

Մակերեսութիւն և յեռանկյունու հաշվելը:

Չորրորդ հառորդ (45 ժամ)։

Ամբողջ թվեր. Բանավոր բազմապատկման ձևեր  $100$ -ով  
50-ով:

Ամբողջ թվերի (վերացական և բարդ անվանական) բազմա-  
պատկման ու բաժանման աշխատանքը շարունակիլ միլիոնի  
սահմանում (գրավոր): Բազմապատկել այն բազմանիշ թվերը,  
վորոնք մեջ տեղում ունին զերո:

Բազմանիշ թվերի բաժանումը յերկանիշ և յեռանիշ թվերի  
վրա (հեշտ զեպքերը):

Բաժանում մասցորպափ: Գործողություններ փակությունով:

Տասնորդական կոտորակի.՝ Նրանց գումարումը և հանումը:  
Տասնորդական կոտորակի կրած փոփոխությունը ստորակետը  
չնշելու, աջ կամ ձախ կողմը տանելու դեպքում մեկ կում յերկու  
տասնորդական նշանով:

Տոկոսներ.—Տոկոսների վորոշ թիվ փոխարինել թվի մասերով.

$$\frac{100\%}{1}, \quad \frac{75\%}{3/4}, \quad \frac{50\%}{1/2}, \quad \frac{25\%}{1/4}, \quad \frac{10\%}{1/10}$$

Խնդիրներ լուծելիս ոգտագործել այս աղյուսակը:

Յերկրաչափական նյութ:—Հողամասերի մակերեսութների չա-  
փումը յեռանկյունների և ուղղանկյունների վերածելու միջոցով

Քաղաքի, կոլխոզի, ույոնի, շրջանի քարտեզի ու պլանի  
ընթերցում:

Քարաեզրի վրա վորոշել յերկու կետերի հեռավորությունները  
մասշտաբի ողնությամբ:

Կազմել ջերմաստիճանի փոփոխության պարզ սյունյակներ  
կապված յեղանակների վրա կատարված դիտողությունների հետէ  
Սյունյակներ կապված բույսերի զարգացման վրա կատարած դի-  
տողությունների հետ:

Որինակելի նյութ խնդիրների յեվ հաշիվ-  
ների համար.

1. Խնդիրներ և հաշվեներ կապված սովորովների աշխա-  
տանքների հետ աշխատանքային սենյակում: Այս կամ այն ա-  
ռարկայի վրա գործադրած ժամանակի հաշվեառումը: Կազմել  
նախահաշիլ յեռանկյունու սարքավորման վրա. ի՞նչ և հարկավոր  
և վճրան, ի՞նչ զնովի, նյութերի ու գործիքների ընդհանուր ար-  
ժողությունը:

Հաշվել պատրաստած իրի արժողությունը՝ հաշվեառման  
յենթարկելով գործիքների վրա գործադրած նյութը, ժամանակը,  
մասնակի հատուցումը և արժողությունը (ամորտիզացիա):

Աշխատանքի սենյակի մակերեսութիւնի չափումը. դաշտացնե-  
րի, վերստակների ավելի ճիշտ տեղադրումն:

Կազմել արհեստանոցի ինվենտարի ցուցակը ությունը և  
նրա արժեքերի հաշիվը: Գծարկման և սիխմատիկ նկարների կի-  
րառումը: Զափական գործիքների ոգտագործումը. կարգին,  
քանոն, անկյունաչափ, հարթաչափ, ուղղորդ (օտես), տոկոսա-  
ցույց անկյունաչափ:

2. Սովորովների տարրական չափելու աշխատանքները՝ տեղե-  
րում ողտագործելով չափի շղթան և եկկերը. առանձին բանջա-  
րանցների, այգիների, գրոցի բակի մակերեսութիւնի վարչումը,  
գարձնելով ար և հեկտարներ:

Ուղղանկյուն հողամասը բաժանել մի քանի մասերի՝ հա-  
մաձայն առաջարկության: Պահանի վերածել փոքր ուղղանկյուն  
հողամասերը:

3. Կազմել և լուծել խնդիրներ ու հաշվեներ աշխատանքի  
ու տնտեսության կազմակերպման շուրջը կոլխոզներում և գոր-  
ծարաններում.

ա) ագրոմինիմումի կիրառման առավելությունները.—ի՞նչ  
չափով և բարձրանում ցանքսի բերքատվությունը զտված սերմը  
և պարարտացման զանազան ձևերի մուծումը. պայքար մորելիսի  
ու ցնասատուների զեմ, վաղ ցելը, հերկելը, կանոնագոր ցանք-  
սափոխություն և այլն միջոցառություններ: Հաշվել այն սերմի

Քոնդերի չափը, վորոնք անհրաժեշտ են կոլխոզների համար ցանք-սերի վորոշ տարածության հետ:

Խսդիրներ յեկամտի բաշխման շուրջը կոլխոզներում:

Բանվոր և կոլխոզնիկի հաշվեգրքույկի հաշիվը:

Անցկացրած զոոմինիմումի առավելությունները: Ընտանի կենդանիների զանազան տեսակների միջին յեկամտարերությունը: Կուլի կենդանի քաշը: Տվյալ քանակությամբ անասունների համար անհրաժեշտ կերի չափը: Հաշիվներ կապված նորմայով կեր տալու հետ:

Կազմել կողխողը մեքենաներով սարքավորելու, հավանոցի և ճագարանոցի կառուցման, անասունների կերի մթերման և այլն պարզ նախահայլվները.

բ) հաշիվներ և խնդիրներ աշխատանքի կազմակերպման շուրջը կոլխոզներում, ֆաբրիկներում, աշխատանքի արտադրողականության աճը համեմատ տնտեսության ծրագրաշափ կարգորման, ճիշտ հաշիվեառման, աշխատակիցների վորակի բարձրացման և այլն:

4. Խնդիրներ կազմած մեքենական տեխնիկայի հետ ֆաբրիկա-գործարանային ձեռնարկության և զյուզատնտեսության մեջ, մեքենաներն աշխատելիս — զանազան դաշտահաների ու մեքենաների մշակման նորմաներ — սերմացան, հնձող, խոռահար, կալսող, քամող մեքենաներ, տրակտոր (միջին և ուկորդային թվեր): Մեքենայի ու ձեռքի աշխատանքի արտադրողականության համեմատությունը:

Խնձով և ինչպես և մեծանում մեքենայի մեջ շարժման արագությունը, ուժի առավելությունը, վշանաձև և ուղագիծ շարժման առաջանալը և ընդհակառակը (ատամնաձև և թոկավոր հաղորդումներ, լծակներ):

Տվյալ անտեսության կարիքը մեքենաների մեջ (հիմնված մեքենաների և արտադրական պլանի մշակման նորմաների վրա):

5. Քաղաքային կոմունալ անտեսությունն. խնդիրներ և հաշիվներ ջրմուղիներով և կոյուղիներով, եկմարտականությամբ, հեռագործությամբ, հեռախոսությունը ու շուրջը: Բնակչարանային շնչարության և բարեկարգության նպատակադրված ու նրա վրա ժախված միջոցների չափը: Խոշոր կոռպերատիվային տան արժությունը, նրա մեջ գտնվող բնակարանների արժողությունը: Առանձին կառուցած տան արժողությունը. այդ ավաների համեմատությունը:

6. Կուլտուրական հեղափոխությունը թվական ցուցանիշներով. ազգաբնակության գրագիտության աճը: Ընդհանուր պարտադիր ուսումը թվական ցուցանիշներով, թե վոր չափով դպրոցը կարողացել և ընդգրկել յերեխաներին. ընդհանուր ուսումնական պատառք արժած ծախսերը. ինչ և տալիս պետությունն ընդհանուր

ուսումը կյանքի մեջ անց կացնելու համար: Արագագրոցական կրթության բնադրավորում ունեցած հաջողությունները. յերեխաների աճը, այդ գործին հատկացրած բյուջեի աճը: Հասարակական մնադի, հասարակական մեքենական լվացարանների աճը: Աշխատավոր մասսաների կուլտուրական կարիքների սպասարկվող կուլտուր-կրթական այլ հաստատությունների, ակումբների, թատրոնների, կինոների, մուղեյների ու այլն աճը:

7. Մայոնի, վշանի, գայրայի տարածությունների վորոշումը կիրամետրով քարտանգի վրա, ոգտագործելով մասշտաբը. տեղերի հեռագործության վորոշումը խոշոր կենտրոններից, շրջանային քաղաքից. քարտեղի վրա վորոշել գետերի, յերկաթուղիների յերկարությունները: Լուծել հետեւյալ տրամի խնդիրներ. կարճ ճանապարհով ինչպես գնալ մինչև այս ինչ կետը, ինչքան ժամանակամիջոցում կարելի յե կտրել վորոշ տարածություն՝ ողտագործելով փոխադրության զանազան միջոցները: Տեղակատունների ողտագործումը յերկաթուղիների վրա: Հաշիվներ նամակների, դրամների ուղարկների (ուօւլկա) փոխադրման շուրջը, խնդիրներ գնացքների հանդիպման և մեկը մյուսին համար շուրջը:

8. Մաթեմատիկական աշխատանքներ, կապված ժամանակի կողմանըման հետ, վոր գարում և տեղի ունեցել այս կամ այն հեղափոխական անցքը (վորի մասին հիշված և ծրագրի մեջ). նրանց ժամանակամիջոցը. որինակ 1905 թվից մինչև հոկտեմբերյան հեղափոխության ժամանակամիջոցը:

9. Բնագիտության պարապմունքների հետ կապված հաշիվներ, վորոնք առընչություն ունենան հողի ամենահասարականալիքի հետ և հետեւանքների ձևակերպումը այլնաձև գիտական պարապմունքների հետ:

Ծառերի տարիքի վորոշումը խավերով (մանյակներով):

Զերմոցների կառուցման պարզ նախահաշիվներ: Պանագործումը բուսատունկի ժերմոցներում, ածուներում (Յ գրադախ), այգիներում: Ծաղկանոցների կառուցումը:

ո Խնդիրներ և հաշիվներ կապված բնության և աշխատանքի բացուցյի տվյալների հետ: Տվյալ տեղի միջին ջերմաստիճանի աշխումը:

Զանազան մշակույթների բուսական ժամանակաշրջանի վորոշումը: Զանազան հացարույսերի ու բանջարեղենների տնկման ու բերքահավաքի ժամկետի վորոշումը:

10. Վիճակագրական նյութ. — Ազգաբնակության հաշվառումը ուայոնում: Քանի աղամարդ, քանի կին, գրագետ, անգրագետ, քանի յերեխա, նրանցից քանի նաճախում դպրոց:

Պտտագիրություն անգամների, կուսակցականների, կոմյերի-տականների, պիտունների թիվը:

Հողամասի ընդհանուր քանակը և ամեն մի տնտեսության բնչքան և ընկնումը:

Գործիքներով, ձինքով, մեքենաներով ապահոված լինելը՝ թրճիթ-ընթերցարանի, հիվանդանոցի, անասնաբուժարանի աշխատանքների, հաշվառումը:

11. Կոռավերացիան.—Ազգաբնակության վեր քանակությունն ենթադրկում կոռավերացիան: Կոռավերատիվը ամսական կամ տարեկան ինչ գումարի ապրանք և ծախում: Ամսավա, որվա միջին վաճառքը: Ի՞չ հետեւանքներ և ունեցել կոռավերատիվը տարվա ընթացքում: Ի՞նչպես և բաշխվում վաստակը, վճրքան և ծախում կուլտուրական կարիքների վրա և այն: Փայտակուտակում: Փայտագաներ:

Ի՞նչպես և տարվում հաշվետվությունը կոռավերատիվում: Հաշիվների, անդորրագրերի, մուռքի և յելքի մատյանների կադմումը և ստուգումը: Ի՞նչպես և հաշվառումը դպրոցական կոռավերատիվում:

12. Հաշվետոման և հաշիվների նյութերի գրաֆիկ ձեռակերպումը աղյուսակների: և սյունակերպ, շրջանաձև դիտարամների ձեռվ ոգտագործելու համար դպրոցում, խմբակների ու դպրոցի հասարակական հաշվետվությանների, ցուցահանդեսների կամ դպրոցական պարապմունքների ժամանակ:

#### 4-րդ ԽՄԲԱԿ.

Առաջին քառորդ (50 ժամ).

Ամբողջ թվեր.—Բանավոր հաշվի որինակների կրկնությունը 100-ի, 1000-ի սահմանում և գրավոր գործողություններ միլիոնի սահմանում:

Բանավոր և գրավոր համարակարգություն միլիարդի սահմանում: Դասակարգեր և կարգեր: Միլիարդը՝ փորպես հաշվի միավոր: Մեծ թվերի կրամատ գրանցումը հազարների և միլիոնների մասերով: Կարգալ մեծ թվերը:

Գումարի փոփոխվելը, յերբ գումարելիքները փոքրացնում կամ մեծացնում ենք մի քանի միավորով: Տարբերության փոփոխությունը, յերբ նվազելին ու հանելին մեծացնում կամ փոքրացնում ենք մի քանի միավորներով:

Բազմանիշ թվերի բազմապատկումը. զերոյով վերջացող կամ մեջ տեղում զերո ունեցող թվերի գրավոր բազմապատկման կը բարձատ յեղանակները:

Բազմանիշ թվերի բաժանման հաճախակի գեպքերը, զերոներ բաժանալիքի վերջում և զերոներ քանորդում:

Տասնորդական կոտրակներ. Յերրորդ տարում անցածի կը ընդությունը. տասնորդական կոտորակի համարակարգությունը. բարդ անվանական թիվս արտահայտել տասնորդական կոտորակի, տասնորդական կոտորակների գումարումը և հանումը—գրավոր կերպով և համբակալի վրա: Տասնորդական կոտորակի բազ-

մապատկումը ամբողջ թվով: Տասնորդական կոտորակի բազմապատկումը 10.000-ով:

Յերկրաչափական նյութ. — Խորանարդ: Խորանարդի սահմանագծերի ու կողերի հավասարությունը: Խորանարդի մասնատումը (բազերտեկա) խորանարդի գծագրումը:

Ուղղանկյուն հատվածակողմ. հատվածակողմի մասնատումը: Հատվածակողմի ամբողջական մակերեսվույթի տարածության հաշվումը: Հատվածակողմի գծագրումը:

Ուղղանկյուն հատվածակողմի և խորանարդի ծավալների չափումը:

Խորանարդ չափեր. խորանարդ մետր, խորանարդ դիցեմետր, խորանարդ սանտիմետր:

Յերկրորդ քառորդ (50 ժամ).

Ամբողջ թվեր.—50-ի, 25-ի, 15-ի վրա բանավոր բազմապատկման յեղանակներ: Վարժություններ (գրավոր) արագ, ճիշտ և զիտակցաբար կատարելու չորս թվաբանական գործողությունները վորյելիք մեծության ամբողջ թվերով —վերացական և անվանական:

Բազմանիշ թվերի բաժանումը (գծվար գեպքերը), զիրոներով վերջացող բազմանիշ թվերի բաժանման կրծատ յեղանակները: Մոտավոր քանորդ (ձգգրառեն մինչև 1-ը): Գտնել միջին թվաբանականը:

Բազմապատկիչների միացնելու կամ փոքրացնելու հետեւակարգել արտադրյալի կրած փոփոխությունը (փոքր թվերով և կոնկրետ որինակներով):

Տասնորդական կոտրակներ. — Տասնորդական կոտորակի բաժանումը ամբողջ թվի վրա: Տասնորդական կոտորակի բաժանումը 10-ի և 1000-ի վրա: Ամբողջ թվի բազմապատկումը տասնորդական կոտորակի: Գտնել ամբողջի մասերը:

Տոկոսներ. — Տասնորդական կոտորակի փոխարինել համապատասխան թվով և ընդհակառակությունը (0,15—15%, 35%—0,35): Գտնել մի տոկոսը: Գտնել թվի մի քանի տոկոսները 2 գործողության մեջոցով:

Յերկրաչափական մատերիալ. — Երջադիմ և շրջանի կենսաբնագույնը տրամադիմ, շառավիդ: Երջադիմ յերկարությունը տրամադիմի ու շառավիդի հետ: Երջադիմ բաժանումը 2, 6, 8 հավասար մասերի: Երջանաձև տոկոսային գիտարաներ:

Յերրորդ քառորդ (55 ժամ)

Տասնորդական կոտրակներ. — Տասնորդական կոտորակի բազմապատկումը տասնորդական կոտորակով: Կոր թվեր ստանալը: Տասնորդական կոտորակի բաժանումը տասնորդական կոտորակի վրա: Ճիշտ բաժանումն մինչև 0,1 0,01:

Հաստրակ կոտորակներ.—Հասարակ կոտորակի անդամների առուները՝ Մասեր կազմելը: Կոտորակ՝ երի մեծության համեմատումը միատեսակ և բազմատեսակ հայտարարների հետ: Կոտորակների կրծատման հասարակ դեպքեր. միատեսակ կոտորակներն ունեն և բազմապատիկ հայտարարներ ըստ հայեցողության (հայտարարները 10-ից չեն բարձրանում):

Գտնել ամբողջի մասերը:

Յերկրաչափական նյութ: Երջանի մակերեւույթը:

### Չորրորդ քառորդ (45 ժամ).

Հասարակ կոտորակներ: Յերկու գործողության միջոցով գանել թվի մասերը ( $1/2=0,5$ ,  $1/4=0,25$ ,  $3/4=0,75$ ,  $2/5=4/10=0,4$ ): և մրողի մասերը գանել յերկու գործողություններով: Գրանել թիվը, յերբ տրված և նրա տոկոսը (յերկու գործողություններով):

Յերկրաչափական նյութ.—Զափել հողամասերի մակերեւույթները եկեղեցի միջոցով բաժանելով ուղղանկյունների և յեռանկյունների: Հողամասերի պլանի գծագրումը:

Պայմանական (տեղագրական) նշաններ ընդորինակման ժամանակ:

Արեակելի նյութ խնդիրների յեվ նաօփների համար.

1. Հոգամյակի իրացումն արդյունաբերության և գյուղատնտեսության տարբեր ճյուղերում, վառելանյութ, մետաղագործություն, մեքենաշինարարություն, հաղորդակցություն, լայն սպասման նյութերի արտադրություն (շաքար, տեկստիլ), գյուղատնտեսության կոլեկտիվացում, ցանքսաղաշտերի, մեքենա—արակտորային կայանների (ՄՏԿ) և այլն աճը: Աշխատանքի արտադրողականության աճը:

Սրբունաբերացման (ինդուստրիալիզացիա) յենթարկելու միջոցները. փոխառություններ, խնայումներ, հարկեր (նյութեր համարակարգությունների, գործողությունների համար մեծ թվերի հետ, դիագրամներ ու գրաֆիկներ կազմելու համար):

2. Ինչպես են կատարում զանազան ֆարմեկներ ու գործարական արտադրական պլանը. համաձայն տվյալ տարեկան պլանի հաշվել, թե վորքան (տրակտորներ, կոմբայններ, տոնն քարածում և այլն) արդյունք պետք է տա միջին թվով ամեն մի զավող յուրաքանչյուր որ: Տվյալ մոմենտի յուրաքանչյուր արդյունքի համաձայն (թիվթերի և հաշվետվությունների հիման վրա) հաշվել, թե ինչպես և կատարվում տարեկան ծրագրը: Միջին թվով տարեկան վորքան արդյունք է տալիս յուրաքանչյուր մի բանվորը:

3. Հաշվել, թե վորքան վառելանյութ և հարկավոր տրակտորների ու ավտոմոբիլների համար, շոգետարների, շողեմեքենաների համար:

4. Կուլտուրական հնդամյակ. հիմնական ցուցանիշները Խորհրդային Միության կուլտուրական ամիս—ընդհանուր ուսուցման, արտադպրոցական դասսիարակության, անդրագիտության վերացման, գրքերի, թերթերի տիրածներին և այլն վերաբերող թվեր: Կոմկուտի, կոմերիտմիության, հոկտեմբերիկների աճը (դիագրամներ և տոկոսային հաշվումներ):

5. Խորիններ թոկավոր հաղորդման և ատամնավոր անիվի շուրջը. անմիջականորեն չափելով տարբեր տրամագիծ ունեցող 2 անիվների շրջագիծը, վորոշել թե քանի պտույտ և անում նրանցից յուրաքանչյուրը միենույն տարածության վրա: Այս անիվների շրջագիծը ու տրամագիծների համեմատությունից հետեւություններ անել. քանի անգամ փոքր ե անիվի տրամագիծը, նույնքան անգամ նա արագ ե պտույտը: Վորոշել, թե թոկային հազորդման գեպբում քանի պտույտ են գործում յերկու անիվները ժամանակի միավորի մեջ:

6. Հաշվել այն պատի տարածությունը, վորը պետք է ներկվի—կամ այն արկղի մակերեւույթը, վորին պետք ե գույն տրվի, կամ լուսամուտների մակերեւույթները:

(Յարունակվում ե III տարվա աշխատանքը, միայն կոտորակային թվերով):

7. Հաշվել սենյակի ծագալը և 1 աշակերտին անհրաժեշտողի քանակը. վորոշել հացանատիկալին շտեմարանի ծագալը:

8. Հաշվել աշխատանքային որերը կոլտնտեսություններում: Արինակելի խնդիրներ. ա) կոլտողնիկի ընտանիքը մի ամսում կատարել և 20 որ թեթեկ աշխատանք. 15 որ միջակ և 12 որ ծանր աշխատանք: Քանի՞ աշխատանքային որ և աշխատել ընտանիքն այդ ամսում:

Ծանոթություն—Միջակ դժվարության (հերկելը, բանջարանոց մաքրելը) աշխատանքը համարվում է մի տշխատանքային որ. թեթեկ աշխատանքնը որը (տափանողը, նախապանը) 0,75 աշխատանքային որ, իսկ ծանր աշխատանքը մի որը (հող քանդողը, կթողը) 1,25 աշխատանքային որ, առանձին վորակ պահանջող աշխատանքի մի որը (արակութիւստ, տաղձագործ, դարբին) 1,5 աշխատանքային որ:

բ) Տրակտորիստը մի որում հերկեց 3,6 հեկտար: Քանի՞ աշխատանքային որ պետք է զրվի նրա զրբույկում, յեթե մի որվա հերկը հաշվում է 0,75 աշխատանքային որ:

9. Կազմել զգրոցի դասական պիտույքների, կահավորման, անհրաժեշտ իրեր պատրաստելու նախահաշիվը:

Կազմել գնած նյութերի, դասական պիտույքների, սեղանատան մթերքների հաշվետվությունը:

10. Ծանոթություն կոլխոզի (ցեխի) յեկըի ու մուտքի ցուցակի հետ: Վորոշել 1 աշխատանքային որվա յեկամուտը կոլխոզում, համաձայն 1 աշխատանքային որվա յեկումտի և աշխատանքային որի քանակի վորոշել կոլխոզնիկի յեկամուտը:

11. Հաշիվներ կապված այն բանի հետ, թե սոցմքումը և հարվածայնությունն ինչ չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը:

12. Խնդիրներ և հաշիվներ կապված կողմնորոշման հետ տարածության մեջ քարտեղի վրա, տվյալ մասշտաբի հիման վրա, հաշվել Խորհրդային Միության զանագան տերրիտորիաների տարածությունները, ջրային տարածությանները, ազգաբնակության խտությունը, յերկաթուղիների և ծովային ճանապարհների և այլն յերկարությունը:

Աշխարհագրական խնդիրներ—ինչպես զնալ մի տեղից դեպի մյուսը Խորհրդային Միության մեջ. կարճ ճանապարհով ինչպես զնալ Մոսկվայից Լենինգրադ:

Մարզն ինչպես և մեքենայի ոգնությամբ կտրում տարածությունը. ցամաքի, ջրի և ողի վրա յերթեվեկելուն սպասարկող մեքենաների համեմատական արագությունը:

13. Խնդիրներ և հաշիվներ կապված ժամանակի հետ. ամենանշանավոր հեղափոխական անցքերի թվականները, վորոշել յերկու անցքերի ժամանակամիջոցը, այս կամ այն դեպքի սկիզբը ու վերջը (որինակ, վորքան ժամանակ և անցել 1905 թվից մինչև Հռկտեմբերյան Հեղափոխությունը, վորքան ժամանակ և տեվել 1 ինտերնացիոնալը, յերբ և առաջ յեկել III ինտերնացիոնալը, կոմյերիտմիությունը, վորքան ժամանակ և անցել բանվորների միջազգային որի՝ մայիսի մեկի տոնակատարման հաստատումից և այլն):

Հայտնի գյուտերը և հայտնագործությունները. յերբ և գըտնվել տպագրական մամուլը, հյուսելու դագրյահը, շողեմեքենան, հեռագիրը, հեռախոսը, ռադիոն, յերբ հրապարակ յեկան ներքին տյրման շարժիչները:

14. Դիագրամներն ու գրաֆիկները կիրառել դպրոցական ներքին կյանքի տուանձին դեմքերն ու իրակությունները (ֆակտы) ձևավորելու (սոցմքաման ու հարվածայնության ընթացքն ու հետևանքները, աշխատանքային դիսցիպլինան, առաջադիմությունն աշխատանքի մեջ—պայքար յերկրորդ տարին մնալու դեմ և այլն):

15. Բանջարանոցում, այգում, դաշտում կատարել ամենապարզ չափելու աշխատանքներ. հողամասի մասնատումը (բազմությունի ընդունակությունը, պլանների գծագրումը, հողամասի չափը վորոշել ըստ պլանի, ճշտել մասշտաբի պատկերացումը):



ՀՀ Ազգային գրադարան



NL0256004

ԳԻՒՐ 35 ԿՈՊ.

ԱՐԴ  
ՀԱՅ Օ

51(02)

Մ-12

15547.58



ASŞC XMK  
Tədris Metod Sektory

## Rəjazlıjjat programı

(Şəhər və qənt məşhbələrinin I-IV gryb uçın)

AZƏRNƏŞR

Baçv — 1932

